Հ. ՄԵԼԻՔ-ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿԻ ՀԱՑ ԼԱՈՒՐԵԱՏՆԵՐԸ

Գիտության, գյուտարարության, գրականության և արվեստի ասպարեզում աչքի ընկնող աշխատանքների համար յուրաքանչյուր տարի Ստալինյան մրցանակի շնորհումը կարևոր իրադարձություն է սովետական մեր ժողովրդի կյանքում։ Ժողովուրդը հարգանքով է շրջապատում այն մարդկանց, որոնց աշխատանքային նվաճումները գալիս են ավելի՛ ամրապնդելու մեր երկրի հզորությունը և ավելի՛ նպաստում հերոսական մեր ժողովրդի բարեկեցությանը։

Տասնմեկերորդ անգամն է, որ սովետական գիտնականներին, գյուտարարներին, նորարարներին, գրականության և արվեստի գործիչներին շնորհվում է այս մեծ մրցանակը։ Եվ յուրաքանչյուր անգամ Ստալինյան մրցանակի նոր լաուրեատների ցուցակը կարդալիս, կարծես ներկա ես լինում գիտության, գրականության և արվեստի նոր ու փայլուն նվաճումների ստուգատեսին։

Սովետական գիտությունը առաջ է ընթանում հսկայի քայլերով. նա բացում է բնության խորհրդավոր գաղտնիքները, զինում է մարդուն նոր միջոցներով՝ բնությունը իրեն ենթարկելու համար և գիտության վառ լույսով լուսավորում իրենց երջանիկ ապագան կերտող սովետական միլիոնավոր մարդկանց ստեղծագործ ուղին։

Սովետական գիտության արժեքը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր հայտնագործում, ո՛ր բնագավառում էլ որ դա լինի, որոշակի նպատակ է դնում՝ է՛լ ավելի բարեկեցիկ դարձնել մարդկային կյանքի և աշխատանքի պայմանները։ Եթե հնարավոր լիներ հետադարձ հայացք ձգել բոլոր այն հզոր մեքենաների, ագրեգատների, գործիքների վրա, որոնք ստեղծվել են մեզ մոտ, ապա մեր ժողովրդի տեխնիկական հանճարեղության ինչպիսի՞ վեհապանծ տեսարան կբացվեր մեր առաջ։ Բայց ինչ էլ որ իրենից ներկայացնելու լինի այդ տեխնիկան, մենք նրա մեջ, ամենից առաջ, մարդու տրնտեսական ու կուլտուրական բարեկեցության նկատմամբ հարազատ պետության ցուցաբերած մեծագույն հոգատարությունն ենք տեսնում։

Հատկանշական է, որ մեքենաշինության, մետալուրգիայի, գյուղատնտեսության ասպարեզում Ստալինյան մրցանակի արժանացած գործերի կողքին մենք տեսնում ենք նաև աշխատանքներ, որոնք կոչված են պաշտպանելու մարդու առողջությունը։

Մրցանակի արժանացած գրական և գեղարվեստական գործերի բնորոշ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ նրանք մոտիկ են ու հասկանալի մեր ժողովրդին, նրանց մեջ ճշմարտացիորեն արտացոլված է ժողովրդական կյանքի ճշմարտացի պատկերը։

Ստալինյան մրցանակի արժանացած լաուրեատների ցուցակում մենք կարդում ենք համաժողովրդական սեր և համակրանք վայելող գիտության և արվեստի գործիչների շատ անուններ։

Սովետական գիտության ու կուլտուրայի և աշխարհի մյուս երկրների առաջավոր գի-

տության և կուլտուրայի հետ ունեցած անխախտ կապի մասին է վկայում չինական, հունգարական, ֆրանսիական մի խումբ գրողների Ստալինյան մրցանակի արժանանալը։

Բերկրալի է նշել, որ գիտության և տեխնիկայի, գրականության և արվեստի ներկայացուցիչների փայլուն ցուցակում հանդիպում ենք նաև հայ ժողովրդի փառապանծ որդիների ու դուստրերի անունների, որոնք իրենց համեստ ներդրումներն են կատարել սիրելի հայրենիքի բարօրության գործում։

Անհրաժեշտ ենք համարում ստորև բերել հայ ժողովրդի արժանավոր այն զավակների անունները, որոնք արժանացել են մեր հայրենիքի հպարտությունը հանդիսացող Մեծ մարդու անվան մրցանակին։

ՄԵԽԱՆԻԿԱՅԻ ԵՎ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

(երկրորդ կարգի մրցանակ 100.000 ռուբլու չափով)

Սերգեյ Նիկիտի Մերգելյանին, *Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի մաթեմատիկայի և մեխանիկայի սեկտորի ավագ գիտական աշխատակից, կոնստրուկտիվ ֆունկցիաների տեսության ասպարեզում կատարած աշխատանքի համար, որոնք տպագրվել են «ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Վ. Ա. Ստեկլովի անվան Մաթեմատիկայի Ինստիտուտի աշխատություններ»-ում 1951 թվականին՝ «Ֆունկցիաների կոնստրուկտիվ տեսության մի քանի հարցերը» խորագրով։*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

(երկրորդ կարգի մրցանակ 100.000 ռուբլու չափով)

Ռուբեն Հայկի Միրիմանովին, *ուրիշ 6 ընկերների հետ միասին տեխնիկայի ասպարեզում կատարած հետազոտությունների համար։*

ՔԻՄԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

(երրորդ կարգի մրցանակ 50.000 ռուբլու չափով)

Աշոտ Տիգրանի Վանիրամյանին, *ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Ֆիզիկական քիմիայի Ինստիտուտի լաբորատորիայի վարիչ, մետաղների էլեկտրոնստվածքների ասպարեզում կատարած հետազոտությունների համար, որոնք շարադրված են 1950 թվին հրապարակված «Մետաղների էլեկտրոնստվածքները» մենագրության մեջ։*

ԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

(երրորդ կարգի մրցանակ 50.000 ռուբլու չափով)

Նորայր Մարտիրոսի Սիսակյանին, *ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Ա. Ն. Բախի Բիոքիմիայի Ինստիտուտի լաբորատորիայի վարիչ, «Պրոտոպլազմային կառուցվածքների ֆերմենտատիվ ակտիվությունը» գիտական աշխատության համար, որը հրատարակվել է 1951 թվին։*

ԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

(երրորդ կարգի մրցանակ 50.000 ռուբլու չափով)

Դավիթ Ներսեսի Աբաբեկովին, *պրոֆեսոր, Մոսկվայի մարզային Գիտա-հետազոտական կլինիկայի Ինստիտուտի բաժնի վարիչ, 1950 թվին հրապարակած «Ակնարկներ ուրոգինեկոլոգիայի վերաբերյալ» մենագրության համար։*

ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԵՎ ԳԻՏԱՊՈՊՈՒԼՅԱՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(երրորդ կարգի մրցանակ 50.000 ռուբլու չափով)

Միխայիլ Քրիստաֆորի Կարապետյանին, *Մոսկվայի Դ. Ի. Մենդելեևի անվան Քիմիկոտեխնոլոգիական Ինստիտուտի դոցենտ, «Քիմիական թերմոդինամիկա» և «Քիմիական թերմոդինամիկայի օրինակներ ու խնդիրներ» ուսումնական ձեռնարկների համար։*

ՄԵՔԵՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

(Առաջին կարգի մրցանակ 150.000 ռուբլու չափով)

Արտեմ Իվանովիչ Միկոյանին, *աշխատանքի ղեկավար, գլխավոր կոնստրուկտոր՝ ուրիշ 17 ինժեներների հետ միասին ինքնաթիռաշինության ասպարեզում կատարած աշխատանքի համար։*

(Երրորդ կարգի մրցանակ 50.000 ռուբլու չափով)

Ռուբեն Գրիգորի Բաղդասարին, «Ֆրեզեր» գործարանի բյուրոյի վարիչ, պարուրաձև գայլիկոնների արտադրության տեխնոլոգիա ստեղծելու համար։

Անդրեյ Իսահակի Պողոսյանցին, Ի. Վ. Ստալինի անվան ճանապարհային մեքենաների գործարանի դիրեկտոր՝ 3 ուրիշ ընկերների հետ մելիորատիվ իրիգացիոն աշխատանքների մեքենայացման բարձր արտադրողական առվահան մեքենաներ ստեղծելու և նրանց արտադրությունը յուրացնելու համար։

Արամ Միսակի Տեր-Պողոսյանցին, ինժեներ՝ ուրիշ 7 ընկերների հետ միասին։ Նավաշինական արդյունաբերության մեջ արտադրության մեթոդների արմատական կատարելագործումների համար։

ՄԵՏԱԼՈՒՐԳԻԱՅԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

(Երրորդ կարգի մրցանակ 50.000 ռուբլու չափով)

Արտեմ Իվանի Ավակովին, աշխատանքի ղեկավար, մեքենաշինության ձեռնարկությունների շինարարության մինիստրության Գիտա-հետազոտության Ինստիտուտի ավագ գիտական աշխատակից՝ 6 ուրիշ ընկերների հետ երկաթե բետոնի սառը եղանակով տափակացրած արմատուրա ու նրա պատրաստման հաստոցներ մշակելու և արմատավորելու համար։

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԵՏԱԽՈՒԶՄԱՆ ԵՎ ՀԱՆՈՒՅԹԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

(Երկրորդ կարգի մրցանակ 100.000 ռուբլու չափով)

Ալեքսանդր Գաբրիելի Գաբրիելյանին, ինժեներ, Ռուբեն Ավետիսի Հովհաննիսյանին, հորատման գրասենյակի դիրեկտոր, նավթի հանքավայրերի շահագործման կոմպլեքսային մեթոդի մշակման և յուրացման համար, 4 ուրիշ ընկերների հետ։

(Երրորդ կարգի մրցանակ 50.000 ռուբլու չափով)

Աստվածատուր Գաբրիելի Բարոյանին, աշխատանքի ղեկավար, 5 ուրիշ ընկերների հետ միասին նավթահորերի շահագործման նոր եղանակ մշակելու համար։

ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

(Երրորդ կարգի մրցանակ 50.000 ռուբլու չափով)

Տրոֆիմ Գերասիմի Ամբարձումովին, աշխատանքի ղեկավար՝ 5 ուրիշ ընկերների հետ միասին, նոր ագրեգատ մշակելու համար։

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

(Երկրորդ կարգի մրցանակ 100.000 ռուբլու չափով)

Աշոտ Գրիգորի Պողոսովին, ծանր ինդուստրիայի ձեռնարկությունների շինարարության մինիստրի տեղակալ՝ 11 ուրիշ ընկերների հետ միասին բետոնի վակուումավորման մեթոդ մշակելու և հիդրոտեխնիկական և արդյունաբերական կառուցվածքների շինարարության մեջ արմատավորելու համար։

(Երրորդ կարգի մրցանակ 50.000 ռուբլու չափով)

Գեորգի Հայրապետի Սարգսյանցին, աշխատանքի ղեկավար, գլխավոր վարչության պետի տեղակալ՝ 11 ուրիշ ընկերների հետ միասին քարի-խճի մեծ կարողության մեքենայացված գործարան ստեղծելու համար։

ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

(Երրորդ կարգի մրցանակ 50.000 ռուբլու չափով)

Վարդգես Անարոնի Վրթանեսյանցին, ինժեներ՝ 6 ուրիշ ընկերների հետ միասին ռադիո ապարատուրա մշակելու համար։

ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

(Երկրորդ կարգի մրցանակ 100.000 ռուբլու չափով)

Անդրեյ Արկադի Բաղդասարովին, աշխատանքի ղեկավար, ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Թղթակից-անդամ, հեմատոլոգիայի և արյան ներարկման Կենտրոնական

Ինստիտուտի դիրեկտոր՝ 7 ուրիշ ընկերների հետ միասին արյան կոնսերվացման պրեպարատներ ստանալու նոր մեթոդներ մշակելու համար։

ՊՈԵԶԻԱՅԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

(երրորդ կարգի մրցանակ 50.000 ռուբլու չափով)

Սիլվա Բարուեակի Կապուտիկյանին, *«Իմ հարազատները» բանաստեղծությունների ժողովածուի համար։*

ԽՐՈՆԻԿԱԼ-ԴՈԿՈՒՄԵՆՏԱԼ ԿԻՆԵՄԱՏՈԳՐԱՖԻԱՅԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

(երրորդ կարգի մրցանակ 50.000 ռուբլու չափով)

Լևոն Ղազարի Արիստակեսովին, *օպերատոր՝ 4 ուրիշ ընկերների հետ միասին «Գյուղատնտեսության նորությունները» դունավոր կինոժուռնալի համար։*

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՓՈՔՐ ՁԵՎԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(երրորդ կարգի մրցանակ 50.000 ռուբլու չափով)

Աշոտ Մովսեսի Սաթյանին, *Հայկական ՍՍՌ վաստակավոր արտիստ՝ «Արարատյան դաշտի երգեր» ցիկլի համար։*

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

(երրորդ կարգի մրցանակ 50.000 ռուբլու չափով)

Վաղարշ Բոգդանի Վաղարշյանին, *Հայկական ՍՍՌ ժողովրդական դերասան, ռեժիսոր։*

Գուրգեն Ջանիբեկի Ջանիբեկյանին, *Հայկական ՍՍՌ ժողովրդական դերասան.*

Օլգա Նիկոլայի Գուլազյանին, *Հայկական ՍՍՌ ժողովրդական դերասան։*

Գեորգ Ալեքսանդրի Աշուղյանին, *Հայկական ՍՍՌ վաստակավոր դերասան։*

Անատոլիա Բենյամինի Սղյանին, *արտիստուհի՝ Երևանի Գ. Սունդուկյանի անվան պետական դրամատիկ թատրոնում «Խիզախում» պիեսի ներկայացման համար։—*